ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-49-Ո-137
2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով դատավարություններին ներգրավված թարգմանիչների կողմից մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ կատարելու անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 38-րդ հոդվածի 10-րդ մասով, 89-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով և 94-րդ հոդվածի 1-ին մասով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի և «Կրթարան Սոնա» ՍՊԸ-ի միջև 08.01.2018թ. կնքված թարգմանչական ծառայությունների մատուցման թիվ 1 պայմանագրի համաձայն մատուցված և մինչև տարեվերջ նախատեսված թարգմանչական ծառայությունների մատուցման դիմաց վճարումներ կատարելու նպատակով Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմ՝ Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնին հատկացնել 20 000 000 (քսան միլիոն) ՀՀ դրամ՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Վարչական ծառայություններ» 423100 հոդվածով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2018թ. նոյեմբերի 15
ք. Երևան